ՏԵՂԵԿԱՆՔ

ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ

Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

Հոդված 41. Լիցենզավորված անձի պարտականությունները

1. Լիցենզավորված անձը պարտավոր է՝

1) իր գործունեությունն իրականացնել սույն օրենսգրքին, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներին ու իրավական ակտերին համապատասխան.

2) ապահովել լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված ենթակառուցվածքների մատչելիությունը օրենքով սահմանված մարմինների ներկայացուցիչների համար.

3) Կարգավորող հանձնաժողովի հաստատմանը ներկայացնել սակագնի տարր կազմող մեծությունների հաշվարկման մեթոդիկաները.

4) ապահովել իր գործունեության թափանցիկությունը.

5) լիցենզավորված գործունեությանը վերաբերող հաշվետվությունները և այլ տեղեկատվությունը Կարգավորող հանձնաժողով ներկայացնել վերջինիս սահմանած ձևերով և կարգով.

6) Կարգավորող հանձնաժողովի պահանջով ներկայացնել լիցենզավորված գործունեության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն և տվյալներ.

7) ապահովել բաժանորդների համար սպասարկման որակին ներկայացվող նվազագույն պահանջները.

8) իրականացնել ֆինանսական աուդիտ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև տեխնիկական աուդիտ:

2. Լիցենզավորված ֆիզիկական անձը կամ լիցենզավորված իրավաբանական անձի իրական սեփականատերը, հիմնադիրները (մասնակիցները), գործադիր մարմինը պարտավոր են հայտարարագիր ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

Սույն մասում նշված անձանց կողմից հայտարարագրի ներկայացման գործընթացի վրա տարածվում են «Հանրային ծառայության մասին» օրենքի 38-42-րդ հոդվածների պահանջներն այնքանով, որքանով կիրառելի են նշված անձանց կողմից հայտարագիր ներկայացնելու իրավահարաբերությունների վրա: